# ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՁՆՓ-ԳՀ-ԾՁԲ-2020/1

ք. Երևան «5» հունիսի 2020թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի Արթուր Սողոմոնյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դավիթ Պապիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող համայնքների «Ջրամատակարարման համակարգերի վերակառուցում» ծրագրի աշխատանքների նախագծերի փորձաքննության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում **նախագծանախահաշվային բացթողումների հետևանքով** շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստից ելնելով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

**2.4.5 Սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված շեղումներից բացառություն են հանդիսանում գոյություն ունեցող ստորգետնյա կոմունիկացիաների հետևանքով առաջացող շեղումները, որոնք հայտնի չեն եղել կամ չեն մատնանշվել ինժեներական ցանցերը շահագործող և այլ շահագրգիռ կազմակերպությունների հետ համաձայնեցման պահին:**

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), փորձաքննության եզրակացությունը (դրական կամ բացասական), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.1.1 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն փորձաքննության եզրակացությունը (դրական կամ բացասական) ներկայացնում է Նախագծողին: Եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն **15 աշխատանքային օրվա** ընթացքում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և բացասական եզրակացությունը՝ ծառայության արդյունքի շտկման նպատակով: Կատարողը **Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում** շտկում է վերոնշյալ անհամապատասխանությունները և ծառայության արդյունքի շտկված տարբերակը ներկայացնում Պատվիրատուին պայմանագրի 3.1 կետով սահմանված կարգով, որից հետո Պատվիրատուն փորձաքննության եզրակացությունը (դրական կամ բացասական) ներկայացնում է Նախագծողին:

3.1.2 Փորձաքննության բացասական եզրակացության դեպքում, Նախագծողը շտկում է եզրակացությամբ սահմանված անհամապատասխանությունները և նախագծի շտկված տարբերակը ներկայացնում Պատվիրատուին և Կատարողին: **Փորձաքննության բացասական եզրակացության հետևանքով նախագծի կրկնակի փորձաքննությունը ապահովում է Նախագծողը (փորձաքննության վերջնական դրական եզրակացություն ստանալու նպատակով):**

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն փորձաքննության վերջնական եզրակացությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **4,090,000 (չորս միլիոն իննսուն հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում

է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի **չափով:**[1321]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, **բայց ոչ ավել քան պայմանագրի գնի 10 (տասը) տոկոսը:**

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցե՝Ք.Երևան,Միկոյան 5/27 |
| ՀՎՀՀ 00846441 | ՀՎՀՀ՝ 00884197 |
| Հ/Հ՝ 900018007519 | Հ/հ՝220311960730000 |
| Կենտրոնական գանձապետարան | ԲԱՆԿ՝ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն |
| Լյութուր Սողոմոնյան | Դավիթ Պապիկյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*«5» հունիսի 2020 թ. կնքված*
*ՁՆՓ-ԳՀ-ԾՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր նախահաշվային գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| | **ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ** | | | | | | |
| 1. | 50531140/1 | «Վերին Դվին բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 380,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 15 օր |
| 2. | 50531140/2 | «Դվին բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 230,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 10 օր |
| 3. | 50531140/3 | «Մխչյան բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 370,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 15 օր |
| 4. | 50531140/4 | «Ոստան բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 250,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 10 օր |
| 5. | 50531140/5 | «Արարատ բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 480,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 15 օր |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6. | 50531140/6 | «Արալեզ բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 280,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 10 օր |
| 7. | 50531140/7 | «Շահումյան բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 190,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 10 օր |
| 8. | 50531140/8 | «Նոր Կյանք բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 290,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 10 օր |
| 9. | 50531140/9 | «Նոր Ուղի բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 200,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 10օր |
| 10. | 50531140/10 | «Փոքր Վեդի բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 340,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 15 օր |
| 11. | 50531140/11 | «Ուրցաձոր բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 270,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 150օր |
| 12. | 50531140/12 | «Սիսավան բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 220,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 10 օր |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 13. | 50531140/13 | «Ազատավան բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 180,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 10 օր |
| 14. | 50531140/14 | «Վերին Արտաշատ բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 230,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 10 օր |
| 15. | 50531140/15 | «Բերդիկ բնակավայրի ջրամատակարարման համակարգի վերակառուցում» ծրագրի նախագծի փորձաքննության ծառայություններ | դրամ | 180,000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցի 31 | Նախագիծը Կատարողին ներկայացնելու օրվանից 10 օր |

| | |
|---|---|
| ***Ֆինանսավորման աղբյուր*** | 2020թ. ՀՀ պետական բյուջե |
| ***Պատվիրատու*** | Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ |
| ***Ծառայության մատուցման ընդհանուր պահանջներ*** | • Իրականացնել նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն |
| ***Նորմատիվային պահանջներ*** | Նախագծերի փորձաքննությունները իրականացնել համաձայն՝<br>• ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի<br>• ՀՀ կառավարության Որոշում 19 մարտի 2015 թվականի N 596-Ն<br>• ՀՀ կառավարության թիվ N 526-Ն 04 մայիսի 2017թ. որոշում |
| **Կատարողի գործունեության շրջանակները** | Կատարողի գործունեության հիմնական շրջանակներն են՝<br>Փորձաքննության նեկայացված նախագծերի ճարտարապետահատակագծային, կոնստրուկտիվ, ինժեներական, տեխնիկական լուծումների, նախահաշիվների և հաշվարկների փորձաքննություն, այդ թվում՝<br>1. Նախագծում ներկայացված շինարարական աշխատանքների ծավալների ստուգում,<br>2. ՀՀ օրենսդրական նորմատիվ փաստաթղթերով պահանջվող ելակետային տվյալների, համաձայնեցումների, եզրակացությունների և այլ անհրաժեշտ փաստաթղթերի առկայության և համապատասխանության ստուգում,<br>3. Յուրաքանչյուր հանձնարարվող նախագծի փորձաքննության ընթացքում Պատվիրատուի մասնագետների հետ համագործակցում և ներկայացվող նորմատիվ պահանջների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունների տրամադրում,<br>4. Փորձաքննական աշխատանքների իրականացման ապահովում՝ ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի,<br>5. Նոր պայմանների ի հայտ գալու դեպքում լրացումների ներմուծում ներկայացված եզրակացությունում: |
| **Կատարողի հաշվետվողական պարտականությունները** | ✓ Որպես կատարված աշխատանքների հաշվետվություն Կատարողը ներկայացնում է յուրաքանչյուր ուսումնասիրված նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության եզրակացությունը:<br>✓ Կատարողը պետք է ներկայացնի փորձաքննության եզրակացությունը Պատվիրատուին 2 օրինակով, ձևավորած և ձևակերպված՝ համաձայն գործող նորմերի, հայերեն լեզվով, թղթային տարբերակով: |

** Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել. քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները՝**

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր՝ **հիդրոտեխնիկական օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ հիդրոտեխնիկական կառույցներ և համակարգեր** :

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018007519
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ ՍՊԸ

Հասցե ք.Երևան ,Միկոյան 5/27

ՀՎՀՀ՝ 00884197
Հ/հ՝ 220311960730000
Բանկ՝ ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ
Տնօրեն
Դավիթ Պապիկյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
«5» հունիսի 2020 թ. կնքված
ՁՆՓ-ԳՀ-ԾՁԲ-2020/1 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 1. | 50531140/1 | Փորձաքննության ծառայություններ՝ Վերին Դվին | ... | ... | ... | ... | ... | 380,000 | 380,000 | 380,000 | 380,000 | 380,000 | 380,000 | 380,000 |
| 2. | 50531140/2 | Փորձաքննության ծառայություններ՝ Դվին | ... | ... | ... | ... | ... | 230,000 | 230,000 | 230,000 | 230,000 | 230,000 | 230,000 | 230,000 |
| 3. | 50531140/3 | Փորձաքննության ծառայություններ՝ Մխչյան | ... | ... | ... | ... | ... | 370,000 | 370,000 | 370,000 | 370,000 | 370,000 | 370,000 | 370,000 |
| 4. | 50531140/4 | Փորձաքննության ծառայություններ՝ Ոստան | ... | ... | ... | ... | ... | 250,000 | 250,000 | 250,000 | 250,000 | 250,000 | 250,000 | 250,000 |
| 5. | 50531140/5 | Փորձաքննության ծառայություններ՝ Արարատ | ... | ... | ... | ... | ... | 480,000 | 480,000 | 480,000 | 480,000 | 480,000 | 480,000 | 480,000 |
| 6. | 50531140/6 | Փորձաքննության ծառայություններ՝ Արալեզ | ... | ... | ... | ... | ... | 280,000 | 280,000 | 280,000 | 280,000 | 280,000 | 280,000 | 280,000 |
| 7. | 50531140/7 | Փորձաքննության ծառայություններ՝ Շահումյան | ... | ... | ... | ... | ... | 190,000 | 190,000 | 190,000 | 190,000 | 190,000 | 190,000 | 190,000 |
| 8. | 50531140/8 | Փորձաքննության ծառայություններ՝ Նոր Կյանք | ... | ... | ... | ... | ... | 290,000 | 290,000 | 290,000 | 290,000 | 290,000 | 290,000 | 290,000 |
| 9. | 50531140/9 | Փորձաքննության ծառայություններ՝ Նոր Ուղի | ... | ... | ... | ... | ... | 200,000 | 200,000 | 200,000 | 200,000 | 200,000 | 200,000 | 200,000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10. | 50531140/10 | Փորձաքննության ծառայություններ՝ Փոքր Վեդի | ... | ... | ... | ... | ... | 340,000 | 340,000 | 340,000 | 340,000 | 340,000 | 340,000 | 340,000 | 340,000 |
| 11. | 50531140/11 | Փորձաքննության ծառայություններ՝ Ուրցաձոր | ... | ... | ... | ... | ... | 270,000 | 270,000 | 270,000 | 270,000 | 270,000 | 270,000 | 270,000 | 270,000 |
| 12. | 50531140/12 | Փորձաքննության ծառայություններ՝ Սիսավան | ... | ... | ... | ... | ... | 220,000 | 220,000 | 220,000 | 220,000 | 220,000 | 220,000 | 220,000 | 220,000 |
| 13. | 50531140/13 | Փորձաքննության ծառայություններ՝ Ազատավան | ... | ... | ... | ... | ... | 180,000 | 180,000 | 180,000 | 180,000 | 180,000 | 180,000 | 180,000 | 180,000 |
| 14. | 50531140/14 | Փորձաքննության ծառայություններ՝ Վերին Արտաշատ | ... | ... | ... | ... | ... | 230,000 | 230,000 | 230,000 | 230,000 | 230,000 | 230,000 | 230,000 | 230,000 |
| 15. | 50531140/15 | Փորձաքննության ծառայություններ՝ Բերդիկ | ... | ... | ... | ... | ... | 180,000 | 180,000 | 180,000 | 180,000 | 180,000 | 180,000 | 180,000 | 180,000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝ 900018007519
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ ՍՊԸ

Հասցե՝Ք. Երևան,Միկոյան 5/27

ՀՎՀՀ՝ 00884197
Հ/հ՝ 220311960730000
Բանկ՝ ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ
Տնօրեն
Դավիթ Պապիկյան

/ստորագրություն/

Կ.Տ

**Հավելված 4.1**
**ՁՆՓ-ԳՀ-ԾՁԲ-2020/1 ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(որակավորման ապահովում)**

ք. Երևան «04» հունիս 2020թ.

«ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ» ՍՊԸ ի դեմս Ընկերության տնօրեն Դավիթ Պապիկյանի (նույնականացման քարտի համար 012764221 տրված 22. 05. 2020թ. տրված 006 ի կողմից,հանրային ծառայությունների համարանիշ՝ 4010940662 )
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

### 1. Համաձայնության առարկան

1.1Ընկերությունը մասնակցում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ՁՆՓ-ԳՀ-ԾՁԲ-2020/1** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ ՍՊԸ

ընկերության անվանում

Ք. Երևան ,Միկոյան 5/27

ընկերության հասցեն

ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԿՈԼ ԲԱՆԿ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

220311960730000

Կ.Տ.

Օր/ամիս/տարի

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅԱՆՁԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝«ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ

6. Վճարողի հաշվի համարը՝ 220311960730000

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00884197

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 00846441

12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900018007519

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 4 090 000 Չորս միլիոն ինսուն հազար

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ և AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/_____/<br>/_____/<br>22.բ. Կ.Տ. | 21.ա. Վճարողի ստորագրությունները<br>/_____/<br>/_____/<br>21.բ. Կ.Տ. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/ | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/ |

| | |
|---|---|
| 24.բ. Կ.Տ. | 23.բ. Կ.Տ. |
| 24.գ "___" ___ 20___ թ. | 23.գ. Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Հավելված 5.1**
**ՁՆՓ-ԳՀ-ԾՁԲ-2020/1 ծածկագրով**
**գնանշման հարցման հրավերի**

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի ապահովում)

ք. Երևան «04» հունիս 2020թ.

«ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ» ՍՊԸ-ի դեմս Ընկերության տնօրեն Դավիթ Պապիկյանի (նույնականացման քարտի համար 012764221 տրված 22. 05. 2020թ. տրված 006 ի կողմից,հանրային ծառայությունների համարանիշ՝ 4010940662 )

Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները,

որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 3. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **ՁՆՓ-ԳՀ-ԾՁԲ-2020/1** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետ՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.6 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.7 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.8Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.9Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.10 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 4. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ» ՍՊԸ

ընկերության անվանումը

ք. Երևան,Միկոյան 5/27

ընկերության հասցեն

ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ

ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

220311960730000

ընկերության բանկային հաշվեհամարը

00884197

ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Դավիթ Պապիկյան

ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ.

Օր/ամիս/տարի

«ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ»
00884197
"EUROHYDROENERGO"

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ***

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն ( բանկ)՝ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ

6. Վճարողի հաշվի համարը՝ 220311960730000

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00884197

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 00846441

12.Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ Կենտրոնական գանձապետարան

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900018007519

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 409 000 (Չորս հարյուր ինը հազար)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ և AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(որակավորման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| | |
|---|---|
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br>/_____/<br>/_____/<br>22.բ. Կ.S. | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br>/_____/<br>21.բ. Կ.S. |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/ | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br>/_____/<br>/ստորագրություն/ |

| | | | |
|---|---|---|---|
| 24.բ. | Կ.Տ. | 23.բ. | Կ.Տ. |
| 24.գ | "___" ___ 20___ թ. | 23.գ. Կատարման ամսաթիվը՝ | "___" ___ 20___թ. |

** Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

# ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ 17083

(լիցենզիայի համարը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԲՆՈՒԹՅԱՆ
(ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉՊԱՀԱՆՋՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

(գործունեության տեսակը)

Տրված է « 12 ԱՊՐԻԼԻ 2019թ.» « ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ » ՍՊԸ ԵՐԵՎԱՆ, ՄԻԿՈՅԱՆ Փ., 5, 27

(լիցենզիան տալու ամսաթիվը, իրավաբանական անձի անվանումն ու գտնվելու վայրը
իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար ազգանունը, անունն ու բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ **ԱՆԺԱՄԿԵՏ**

**ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

(ստորագրություն)
Կ.Տ.

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ
(անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ

ՔՊԼ N 17083 - 6

(լիցենզիայի և ներդիրի համարները)

« ԵՎՐՈՀԻԴՐՈԷՆԵՐԳՈ » ՍՊԸ

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՄԱՆՈՒԿ ՈԱՖԻԿԻ ՊԱՊԻԿՅԱՆ AM0461910

(կազմակերպության անվանումը և մասնագետի անձնագրային տվյալները)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ՝

ՀԻԴՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

(գործունեության ոլորտը)

12. 04. 2019թ.

(տալու ամսաթիվը)

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ՝ ԱՆԺԱՄԿԵՏ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրությունը)

Կ. Տ

Վ. ՎԵՐՄԻՇՅԱՆ

(անուն ազգանուն)

Ներդիրը վավերական է լիցենզիայի առկայության դեպքում